## Երևանի «Կայուն էներգետիկայի զարգացման գործողությունների ծրագիր» Խոսում են Երևանի համալսարանական ուսանողները

Ամսաթիվ՝ շաբաթ, ապրիլի 16, 2016թ., ժամը՝ 13:00-18:45
Վայր՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկյան դահլիճ, Երևան, Բաղրամյան 40
Աշխատանքային լեզու՝ հայերեն

Երևանի քաղաքապետարանը մշակում է կայուն էներգետիկայի զարգացման գործողությունների ծրագիր (ԿԷԶԳԾ), որը, ի թիվս մի շարք նպատակների, նաև նպատակ ունի մինչև 2020թ. նվազեցնել քաղաքում ածխաթթու գազի (CO2) արտանետումները 20%-ով: Սրան կարելի է հասնել մի շարք ձևերով՝ հանածո վառելիքից ստացվող էներգիայի օգտագործման նվազեցում, ածխաթթու գազի արտանետումների կրճատում, ածխածնի պահեստավորման բարձրացում: Սա իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել քաղաքի մի քանի ոլորտներ՝

- շենքերում էներգաարդյունավետությունը և քաղաքի ենթակառուցվածքներ,
- վերականգնվող էներգիա,
- տրանսպորտ,
- կանաչ գոտիներ,
- կոշտ թափոնների կառավարում,
- ջրի արդյունավետություն:

Շաբաթ օրը, ս.թ. ապրիլի 16-ի, ժամը՝ 13:00-ից մինչև 18:45-ը, Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը կհյուրընկալի աշխատանքային հանդիպում, որի ընթացքում կքննարկվեն ածխաթթու գազի արտանետման նվազեցմանը ուղղված գաղափարներ և գործողություններ: Աշխատանքային հանդիպման մուտքը բաց է համալսարանական ուսանողների համար:

Աշխատանքային հանդիպումը կազմակերպվում է Երևանի ԿԷԶԳԾ-ի շրջանակում: Երևանի քաղաքապետարանին այս հարցում աջակցում են ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը/Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը (ՄԱԶԾ/ԳԷՀ) և Հայաստանում էներգախնայողության աջակցման հիմնադրամը (ESF-Հայաստան):

Աշխատանքային հանդիպման ընթացքում ստեղծված գաղափարները կներառվեն Երևանի ԿԷԶԳԾ-ի մեջ և կքննարկվեն քաղաքապետարանի ու միջազգային աջակից/ֆինանսական կառույցների հետ:

### Աշխատանքային հանդիպման օրակարգ

**ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՀԼԻՃ**

| | |
|---|---|
| 13:00 - 13:05 | Բացման խոսք (Դիանա Հարությունյան, ՄԱԶԾ Հայաստան) |
| 13:05 - 13:30 | Երևանի ԿԷԶԳԾ (Աստղինե Պասոյան, ESF-Հայաստան) |
| 13:30 - 14:00 | Կայուն էներգետիկային բազմաշերտ մոտեցում (Ալեն Ամիրխանյան, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն) |
| 14:00 - 14:15 | Ցուցումներ աշխատանքային հանդիպման մասնակիցներին և նրանց գործողությունների մեռաբեռուաւ |

**3-ՐԴ ՀԱՐԿ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾ, ՓԱՐԱՄԱԶ ԱՎԵԴԻՍԵԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ**

| | |
|---|---|
| 14:15 - 14:30 | Ընդմիջում |
| 14:30 - 16:30 | Աշխատանքային հանդիպման խմբեր (նիստ առաջին) |
| 16:30 - 18:00 | Աշխատանքային հանդիպման խմբեր (նիստ երկրորդ) |

**ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՀԼԻՃ**

18:00 - 18:45 Միասնական հաշվետվություն խմբի գործողությունների վերաբերյալ և առաջարկություններ